

Հաստատված է
«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
Գործադիր տնօրենի
22.01.2026թ.-ի թիվ ԷԿ ՀՊ 22/01/2026-1 որոշմամբ
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան



«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2026թ.

ա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ.....	3
2. Տվյալների մշակման հիմքերը և նպատակը	5
3. Տվյալների մշակման եղանակները և պայմանները	9
4. Տվյալների պահպանման ժամկետները	10
5. Տվյալների փոխանցումը երրորդ անձանց	10
6. Տվյալների անվտանգության ապահովում, ռիսկերի գնահատում և մշտադիտարկում.....	12
7. Տվյալների սուբյեկտի իրավունքները և բողոքարկման կարգը.....	14
8. Պատասխանատվությունը.....	15
9. Այլ դրույթներ	15

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Նպատակը

Տվյալների կառավարման քաղաքականության (այսուհետ՝ Քաղաքականություն) նպատակն է

- ապահովել «Էփրիքթո Վապիտալ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Էփրիքթո Վապիտալ» կամ «ընկերություն») գործունեության օրինականությունը անձնական տվյալների պաշտպանության ոլորտում՝ հիմնվելով ՀՀ օրենսդրության, ՀՀ Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերի, միջազգային ստանդարտների և ընկերության ներքին պահանջների վրա՝ ներդնելով տվյալների պահպանության, գաղտնագրման, պահուստավորման, վերականգնման և կառավարման արդյունավետ ընթացակարգեր, ինչպես նաև խախտումների ռիսկի նվազեցման մեխանիզմներ,
- ապահովել տվյալների և դրանց սուբյեկտների վերաբերյալ ոչ հրապարակային տեղեկատվության պատշաճ պաշտպանություն չարտոնված մուտքից և հրապարակումից,
- միասնականացնել Էփրիքթո Վապիտալի կողմից տվյալների մշակման ընթացակարգերը՝ համապատասխան ՀՀ օրենսդրությանը:

1.2. Կարգավորման առարկան

1.2.1. Սույն Քաղաքականությամբ սահմանվում են հետևյալ սուբյեկտներին վերաբերող և/կամ վերջիններիս կողմից փոխանցված Տվյալների մշակման հիմքերն ու սահմանները՝

- հաճախորդներ և նրանց ներկայացուցիչներ,
- պոտենցիալ հաճախորդներ,
- գործընկերներ,
- աշխատողներ և թափուր հաստիքների համար դիմած թեկնածուներ, փորձնակներ
- Ընկերության կայքի/Համակարգի օգտատերեր:

1.3. Սահմանումներ և մեկնաբանում

1.3.1. Սույն Քաղաքականության մեջ օգտագործվող հիմնական հասկացություններն են.

- **«Տվյալների սուբյեկտ»**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ում տվյալները մշակվել են կամ ենթակա են մշակման Էփրիքթո Վապիտալի կողմից.
- **«Տվյալ»**՝ Անձնական տվյալ կամ ցանկացած այլ տեղեկություն, որը վերաբերում է Տվյալների սուբյեկտին և չի հանդիսանում հանրամատչելի տվյալ.
- **«Անձնական տվյալ»**՝ օգտագործվում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով.
- **«Տվյալներ մշակող»**՝ «Էփրիքթո Վապիտալ» փակ բաժնետիրական ընկերություն.
- **«Մշակում»**՝ տվյալները հավաքելուց մինչև ոչնչացումը տվյալների հետ կատարվող ցանկացած գործողություն՝ ներառյալ տվյալի մուտքագրում, համակարգում, ձևավորում, պահպանում, օգտագործում, վերափոխում, վերականգնում, փոխանցում, ուղղում, արգելափակում, ապանձնավորում.
- **«Հաճախորդ»**՝ այն անձը (այդ թվում վերջինիս ներկայացուցիչը), որն օգտվում են Էփրիքթո Վապիտալի կողմից մատուցվող ներդրումային ծառայություններից և/կամ ոչ հիմնական ծառայություններից և/կամ կրիպտոակտիվներով մատուցվող ծառայություններից.
- **«Պոտենցիալ հաճախորդ»**՝ այն անձը (այդ թվում վերջինիս ներկայացուցիչը), որը

դիմել է Էփրիքոթ Կապիտալի կողմից մատուցվող ներդրումային ծառայություններից և/կամ ոչ հիմնական ծառայություններից և/կամ կրիպտոակտիվներով մատուցվող ծառայություններից օգտվելու նպատակով

- **«Գործընկեր»**՝ ցանկացած անձ, որն Էփրիքոթ Կապիտալի հետ գտնվում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ կողմերի միջև ստորագրված պայմանագրի ուժով, կամ որի հետ Էփրիքոթ Կապիտալը կնքում է կամ նախատեսում է կնքել ֆինանսական գործարքներ.
- **«Քուրի (cookie)»**՝ վեբ կայքի կողմից օգտատիրոջ սարքում պահպանվող փոքր ֆայլ, որը կիրառվում է օգտատիրոջ նույնականացման, անհատականացման և վերլուծության նպատակով.
- **«Համակարգ»**՝ համապատասխան ինտերֆեյսով էլեկտրոնային (ցանցային, ինտերնետ) գործիք հանդիսացող հեռախոսային հավելված կամ «Իմ հաշիվը» մոդուլ (հղումը տրված է www.apricotcapital.am կայքում) որին հասանելիություն ունենալով Հաճախորդները կարող են փոխանցել գործարքների կնքման պատվերներն ի կատարումն, Հաճախորդին ներկայացնել պատվերների, կատարված գործարքների վերաբերյալ և այլ տեղեկություններ, իրականացնել Հաճախորդի և Էփրիքոթ Կապիտալի միջև հաղորդակցումն ու հաղորդագրությունների/տեղեկատվության փոխանակումը.
- **«Հանրամատչելի տվյալ»**՝ տեղեկություններ, որոնք տվյալների սուբյեկտի համաձայնությամբ կամ իր տվյալները հանրամատչելի դարձնելուն ուղղված գիտակցված գործողությունների կատարմամբ մատչելի են դառնում որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց համար, ինչպես նաև այն տեղեկությունները, որոնք օրենքով նախատեսված են որպես հանրամատչելի տեղեկություններ:
- **«Փոխկապակցված կազմակերպություն»**՝ կազմակերպություն, որը վերահսկում, վերահսկվում կամ գտնվում է ընդհանուր վերահսկողության ներքո Էփրիքոթ Կապիտալի հետ:

1.3.2. Սույն քաղաքականությամբ չսահմանված հասկացությունները օգտագործվում են ՀՀ օրենսդրությամբ, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, աշխատանքային հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում, ինչպես նաև Էփրիքոթ Կապիտալի Բրոքերային (դիլերային) և պահառության ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններում և Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններում կիրառվող իմաստով:

1.3.3. Սույն քաղաքականության իմաստով կիրառելի օրենսդրություն է համարվում ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությունը, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը, այլ օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային փաստաթղթերը:

1.3.4. Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում Էփրիքոթ Կապիտալի այլ ներքին իրավական ակտերի կարգավորումները կիրառելի են, եթե սույն քաղաքականությամբ այլ հատուկ կարգավորում նախատեսված չէ: Նման ներքին իրավական ակտեր են ներառյալ, բայց չսահմանափակվելով՝

- Ծառայողական տեղեկատվության պահպանման կանոնակարգը,
- Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը,
- Մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը:

Սույն կետում թվարկված ընկերության ներքին իրավական ակտերի հետ հակասության դեպքում նախապատվությունը տրվում է Քաղաքականությանը:

1.3.5. Քաղաքականության առանձին կետերի անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության մեկնաբանման վրա:

1.3.6. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա Քաղաքականության մեջ փոքրատառերով գործածված բառերը/տերմիններն ունեն Քաղաքականության 1.3 կետում դրանց տրված նշանակությունը:

1.4. Տվյալների մշակման սկզբունքները.

1.4.1. **Օրինականություն.** Էփրիքոթ Կապիտալի կողմից Տվյալների հավաքումը և մշակումը կատարվում է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան: Էփրիքոթ Կապիտալը հավաքում է միայն այնպիսի տվյալ, որը կապված է ընկերության օրինաչափ նպատակների հետ:

1.4.2. **Համաչափություն.** Տվյալների մշակումը պետք է ծառայի օրինական նպատակներին և իրականացվի այնչափ, որքան անհրաժեշտ է այդ նպատակներին հասնելու համար: Էփրիքոթ Կապիտալը պահպանում է Տվյալները միայն այնքան ժամանակ, որքան դրանք անհրաժեշտ են ընկերության օրինաչափ նպատակներին հասնելու համար: Այդ անհրաժեշտության դադարման դեպքում տվյալները ոչնչացվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց պահպանման պարտականությունը սահմանված է օրենքով: Մասնավորապես՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի շրջանակում Ընկերությունը պարտավոր է պահել որոշ տվյալներ՝ անկախ գործարքի կամ գործարար հարաբերության շարունակականությունից:

1.4.3. **Հավաստիություն.** Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում, որ մշակվող Տվյալները լինեն ամբողջական, ճշգրիտ, պարզ և հնարավորինս թարմացված:

1.4.4. **Տվյալների սուբյեկտի նվազագույն ներգրավում.** Տվյալների մշակումն իրականացվում է Տվյալների սուբյեկտի նվազագույն ներգրավման սկզբունքով, այսինքն՝ եթե հնարավոր է, ապա տվյալը ձեռք բերել այլ օրինական աղբյուրներից՝ առանց Տվյալի սուբյեկտի ներգրավման:

1.4.5. **Գաղտնիություն.** Ընկերության կողմից մշակվող Տվյալները դասակարգվում են որպես խիստ կոնֆիդենցիալ տեղեկատվություն՝ համաձայն Էփրիքոթ Կապիտալի՝ Տեղեկատվության դասակարգման կարգի:

2. Տվյալների մշակման հիմքերը և նպատակը

2.1. Էփրիքոթ Կապիտալը տվյալները մշակում է սույն Քաղաքականության 2.5 կետում նշված նպատակներից ելնելով և համապատասխան հիմքերի առկայության դեպքում, ինչպիսիք կարող են հանդիսանալ՝

2.1.1. **Պայմանագրային պարտավորությունների կատարումը,** երբ տվյալների մշակումը անհրաժեշտ է պայմանագրի կնքման, պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման կամ սպասարկման նպատակով:

2.1.2. **Իրավական պարտավորությունների կատարումը,** երբ Ընկերությունը պարտավոր է տվյալները մշակել, այդ թվում փոխանցել պետական մարմիններին ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

2.1.3. **Իրավաչափ շահերը,** երբ տվյալների մշակումը կարևոր է Ընկերության կամ երրորդ կողմի օրինական շահերի իրացման համար՝ առանց տվյալների սուբյեկտի հիմնարար իրավունքների և ազատությունների խախտման:

2.1.4. **Տվյալների սուբյեկտի համաձայնությունը**, երբ տվյալների մշակումը կատարվում է անձի հստակ և տեղեկացված համաձայնությամբ:

2.2. Էփրիքոթ Կապիտալը պատշաճ զգուշավորություն է դրսևորում հատուկ կատեգորիայի Անձնական տվյալների հավաքման և մշակման հարցում՝ հաշվի առնելով դրանց զգայուն բնույթը և ֆիզիկական անձի իրավունքներին ինտենսիվ միջամտության հնարավորությունը:

2.3. Մույն Քաղաքականության 2.1 կետում նշված հիմքերի առկայության դեպքում Էփրիքոթ Կապիտալը մշակում է հետևյալ կատեգորիաների տվյալներ՝

2.3.1. **Անձին նույնականացնող տվյալներ, այդ թվում՝**

- անուն, ազգանուն, հայրանուն (իրավաբանական անձի դեպքում՝ անվանում)
- ծննդյան օր/ամիս/տարի
- անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալներ
- Իրավաբանական անձի կազմակերպարարական ձև, գրանցման համար, ՀՎՀՀ (ֆիզիկական անձի դեպքում՝ հանրային ծառայության համարանիշը)
- կենսաչափական տվյալներ

2.3.2. **Կոնտակտային տվյալներ, այդ թվում՝**

- բնակության և/կամ իրավաբանական հասցե
- հեռախոսահամար(ներ)
- էլեկտրոնային փոստի հասցե
- այլ հաղորդակցության միջոցներ (օր.՝ մեսենջերներ, զրուցարաններ)

2.3.3. **Ֆինանսական և հաշվարկային տվյալներ, այդ թվում՝**

- բանկային/բրոքերային հաշվի տվյալներ
- վճարումների պատմություն
- վարկային և ներդրումային տեղեկություն
- հաշվարկային փաստաթղթեր
- ֆինանսական հաշվետվություններ
- եկամուտների ծագման աղբյուր, դրանց մեծությունը, ընդհանուր ակտիվները և իրացվելի ակտիվները և այլն,

2.3.4. **Գործարքային և պայմանագրային տվյալներ, այդ թվում՝**

- կնքված պայմանագրեր և դրանց կատարում
- գործարքների պատմություն
- հաշվի տվյալներ, հաշվի օգտագործման հաճախականություն
- ծառայության մատուցման կամ տեխնիկական սպասարկման գրանցումներ
- գրագրություններ

2.3.5. **Տեխնիկական և վերլուծական տվյալներ, այդ թվում՝**

- IP հասցե, սարքի տեսակը, օպերացիոն համակարգ
- Չննարկիչի տվյալներ
- Cookie-ներով հավաքագրված տեղեկատվություն
- Օգտագործման ժամանակային տվյալներ
- Միալիների կամ անոմալիաների տեղեկագրեր
- Վերլուծական գործիքների տվյալներ (օր.՝ Google Analytics)

2.3.6. **Տեղորոշման տվյալներ, այդ թվում՝**

- սարքի դիրքորոշման տվյալներ (GPS, բջջային ցանց)
- Զարտեգային դիրք՝ հավելվածներում կամ վեբհարթակներում

2.3.7. **Կենսաչափական տվյալներ**

- մատնահետք
 - դեմքի պատկեր / ճանաչում
 - ձայնային նմուշներ
 - տեսաձայնագրություն կամ լուսանկար՝ նույնականացման նպատակով
- 2.3.8. **Առողջական տվյալներ, այդ թվում՝**
- բժշկական տեղեկանքներ (օրինակ՝ աշխատանքի ընդունման նպատակով)
 - հաշմանդամության կամ հատուկ կարիքների վերաբերյալ տեղեկատվություն
- 2.3.9. **Աշխատանքային և մասնագիտական տվյալներ, այդ թվում՝**
- պաշտոն, կազմակերպության ներսում զբաղեցրած դիրք
 - աշխատանքային փորձ, մասնագիտական հմտություններ
 - կրթություն, վկայականներ, ռեզյումե
 - ներկայացուցիչներ (տնօրեն, հաշվապահ և այլն)
- 2.3.10. **Համապատասխանության ուսումնասիրման համար պահանջվող տվյալներ (KYC/AML), այդ թվում՝**
- իրական շահառուի վերաբերյալ տվյալներ
 - Էփրիքոթ Կապիտալի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգով պահանջվող տեղեկատվություն և փաստաթղթեր
 - Էփրիքոթ Կապիտալի՝ Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով պահանջվող տեղեկատվություն և փաստաթղթեր
 - ռիսկերի գնահատման տվյալներ
- 2.3.11. **Վարքագծային, մարքեթինգային և վերլուծական տվյալներ, այդ թվում՝**
- օգտագործման վարքագիծ (կայքում կամ հավելվածում)
 - նախապատվություններ, որոնման պատմություն
 - մարքեթինգային հաղորդագրությունների արձագանքներ
 - սոցիալական մեդիայում ակտիվություն (ամկայության դեպքում),
 - ներդրումային նպատակների մասին տեղեկություններ (ռիսկերի նկատմամբ նախապատվությունը և դրանց շրջանակը, կատարվող ներդրման նպատակը և այլն)
- 2.3.12. **Ներդրումային գործունեության բնագավառում հաճախորդի գիտելիքների և փորձի մասին տեղեկություններ, այդ թվում՝**
- տեղեկություններ այն ներդրումային ծառայությունների, արժեթղթերով գործարքների և արժեթղթերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է հաճախորդը կամ պոտենցիալ հաճախորդը:
- 2.4. Քաղաքականության 2.3. կետով նախատեսված տվյալները Անձնական տվյալ են համարվում այնքանով, որքանով հնարավորություն են տալիս նույնականացնել ֆիզիկական անձին:
- 2.5. Էփրիքոթ Կապիտալի կողմից տվյալների մշակման նպատակները ներառում են հետևյալը՝
- 2.5.1. **Ներդրումային և լրացուցիչ ծառայությունների մատուցում, կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցում.** (Հաճախորդների համար հաշիվների բացում և վարում, Հաճախորդների Պատվերների/Հանձնարարականների կատարում, գործարքների կատարում և գործարքային պատմության վարում, Հաճախորդի հետ պայմանագրային հարաբերությունների կառավարում, և այլն):
- 2.5.2. **Հաճախորդի կամ պոտենցիալ հաճախորդի նույնականացում և համապատասխանություն իրավական պահանջներին (KYC/AML)** (սուբյեկտի նույնականացում, իրական շահառուի բացահայտում, ՓԼԱՖ և այլ կանոնակարգման

պահանջներին համապատասխանություն, պետական կամ վերահսկող/կարգավորող մարմինների հարցումներին ի պատասխան տեղեկատվության փոխանակում):

2.5.3. Ռիսկերի կառավարում և անօրինական գործողությունների կանխարգելում: Տվյալները մշակվում են՝ Հանախորդի և գործարքի հետ կապված ռիսկերի գնահատման, շահառուների ստուգման, կասկածելի գործունեության հայտնաբերման և կանխարգելման նպատակով:

2.5.4. Հանախորդների սպասարկում և հաղորդակցություն: Տվյալները մշակվում են՝ Հանախորդներին օժանդակություն ցուցաբերելու, տեղեկատվության փոխանցման (օր.՝ SMS/email ծանուցումներ), իրազեկման նպատակով:

2.5.5. Վերլուծություն, զարգացում և ծառայությունների բարելավում: Տվյալները կարող են օգտագործվել՝ վարքագծի վերլուծության, Էփրիքթթ Կապիտալի կողմից մատուցվող ծառայությունների օպտիմալացման և նոր ֆունկցիոնալ հնարավորությունների զարգացման, մարքեթինգային ուսումնասիրությունների, հարցումների, վիճակագրության նպատակով:

2.5.6. Մարքեթինգ և անհատականացված առաջարկներ: Տվյալները կարող են մշակվել՝ գովազդային, տեղեկատվական կամ առաջարկ պարունակող նյութեր ուղարկելու, անհատականացված բովանդակություն կամ ծառայություններ առաջարկելու նպատակով:

2.5.7. Տեխնիկական ապահովում և տեղեկատվական անվտանգություն Տվյալների մշակումը անհրաժեշտ է՝ ընկերության կայքի և Համակարգի բնականոն աշխատանքի ապահովման, Տվյալները կորուստից, չարտոնված մուտքից կամ խարդախություններից պաշտպանության, մուտքերի մոնիթորինգի և վերլուծության նպատակով:

2.5.8. Ներքին վերլուծություն, աուդիտ և հաշվետվություն: Տվյալները օգտագործվում են ընկերության ֆինանսական և գործառնական վերլուծության, ներքին աուդիտի, վերահսկման և համապատասխանության վերլուծությունների իրականացման, հաշվետվությունների կազմման նպատակով:

2.5.9. Իրավական պաշտպանության և վեճերի լուծում: Տվյալները կարող են մշակվել իրավական պահանջների ներկայացման, դատավարություններին մասնակցության կամ իրավական վեճերի կարգավորման նպատակով:

2.5.10. Աշխատանքային հարաբերությունների կառավարում: Տվյալները կարող են մշակվել՝ աշխատանքի դիմումների գնահատման, թեկնածուների ընտրության, աշխատանքային պայմանագրերի կնքման և կատարման, աշխատավարձերի և հարկային պարտավորությունների հաշվարկի, աշխատանքային կարգապահության վերահսկման, գնահատման և խթանման միջոցառումների իրականացման, աշխատողների առողջության և անվտանգության ապահովման, փորձնականների համար աշխատանքային պայմաններ ստեղծելու և կարգապահության վերահսկման, աշխատանքային հարաբերությունները կարգավորող նորմատիվ և ներքին իրավական ակտերի այլ պահանջների ապահովման նպատակով:

2.6. Էփրիքթթ Կապիտալն ապահովում է մշակվող անձնական տվյալների բովանդակության և ծավալի համապատասխանությունը սույն քաղաքականությամբ նշված նպատակներին և, անհրաժեշտության դեպքում, միջոցներ է ձեռնարկում թույլ տրված խախտումները վերացնելու համար:

2.7. Էփրիքթթ Կապիտալը հատուկ կատեգորիայի անձնական տվյալները մշակում է միայն տվյալների սուբյեկտի համաձայնության դեպքում կամ առանց համաձայնության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

2.8. Էփրիքթթ Կապիտալը, տվյալների մշակման նպատակներին հասնելու համար, իրավունք ունի տվյալները փոխանցել երրորդ անձանց՝ պահպանելով ՀՀ օրենսդրության և սույն Քաղաքականության պահանջները:

3.1. Տվյալների մշակման եղանակները և պայմանները

3.1.1. Էփրիքթթ Կապիտալը տվյալներ մշակում է տեխնիկական ցանկացած միջոցների (այդ թվում՝ ավտոմատացման միջոցների) և/կամ ոչ տեխնիկական միջոցների կիրառմամբ:

3.1.2. Էփրիքթթ Կապիտալի կողմից տվյալները կարող են հայցվել բանավոր, փաստաթղթային, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով:

3.1.3. Էփրիքթթ Կապիտալի կայքը կարող է նաև օգտագործել քուքիներ (cookies): Անձնական տվյալների անցանկալի հավաքումից խուսափելու համար ընկերության կայքը օգտատիրոջը հնարավորություն է տալիս քուքիների կարգավորումները հարմարեցնել իր նախընտրություններին:

3.1.4. Էփրիքթթ Կապիտալի կայքի վեբ սերվերը կարող է ավտոմատացված կերպով հավաքել օգտատիրոջ մասին այնպիսի տվյալներ, ինչպիսիք են IP հասցեն, կայքը, որից օգտատերը վերահասցեագրվել է Ընկերության կայք, մուտքի ամսաթիվը, տևողությունը և այլն:

3.1.5. Տվյալների սուբյեկտի տրամադրած տվյալների նկատմամբ գործում է դրանց ճշմարտացիության կանխավարկածը, այսինքն՝ ընկերությունը հիմնվում է Տվյալների սուբյեկտի տրամադրած տվյալների վրա՝ բացառությամբ, եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:

3.1.6. Տվյալների սուբյեկտի կողմից Էփրիքթթ Կապիտալին տրամադրվող երրորդ անձանց տվյալների պարագայում ընկերությունը ելնում է այն կանխավարկածից, որ Տվյալների սուբյեկտը ստացել է երրորդ անձի համաձայնությունը, որպեսզի ընկերությունը մշակի վերջինիս տվյալները: Տվյալների սուբյեկտը կրում է նման համաձայնությունը չստանալու հետ կապված բոլոր հետևանքները և պարտավորվում է հատուցել Էփրիքթթ Կապիտալին՝ նման համաձայնություն չստանալու հետևանքով կրած վնասները:

3.1.7. Հաճախորդը Էփրիքթթ Կապիտալի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելիս և ծառայությունների մատուցման համար դիմելիս տալիս է իր համաձայնությունը, որ Ընկերությունը մշակի իր տվյալները սույն Քաղաքականությամբ սահմանված կարգով և նպատակներով:

3.1.8. Հաճախորդը կարող է հրաժարվել տվյալներ տրամադրելուց՝ հաշվի առնելով, որ այդ դեպքում Էփրիքթթ Կապիտալը կարող է զրկվել հաճախորդին ծառայություններ մատուցելուց կամ ծառայությունների մատուցման շրջանակներում որոշակի գործողություններ կատարելու հնարավորությունից: Հաճախորդի կողմից տվյալները տրամադրելուց հրաժարվելու կամ թերի տվյալներ տրամադրելու դեպքում Էփրիքթթ Կապիտալը վերջինիս զգուշացնում է դրա հնարավոր հետևանքների մասին:

3.1.9. Էփրիքթթ Կապիտալի բնականոն գործունեության, ծառայությունների մատուցման, հաճախորդների հանձնարարականների և այլ իրավաչափ գործողությունների շրջանակներում Գործընկերներից կարող են հայցվել տվյալներ: Էփրիքթթ Կապիտալն իրավասու է իր Գործընկերների տվյալները փոխանցել հաճախորդներին և/կամ այլ Գործընկերներին այն ծավալով, որն անհրաժեշտ է հաճախորդների՝ կիրառելի օրենսդրությամբ սահմանված իրավունքներն իրացնելու և ծառայություններ մատուցելու համար: Ընկերության հետ գործարար հարաբերությունների մեջ մտնելիս Գործընկերը տալիս է իր համաձայնությունը, որ իր տվյալները Էփրիքթթ Կապիտալի կողմից ենթարկվեն հավաքագրման, պահպանման,

օգտագործման, փոխանցման և այլ կերպ մշակման՝ սույն Քաղաքականությամբ սահմանված կարգով և նպատակներով:

3.1.10. Աշխատանքի ընդունման պահից աշխատատեղը տալիս է իր համաձայնությունը, որ իր տվյալները Էփրիքոթ Կապիտալի կողմից մշակվեն սույն Քաղաքականությամբ սահմանված կարգով և նպատակներով:

3.1.11. Փորձնակը տալիս է իր համաձայնությունը, որ Էփրիքոթ Կապիտալում փորձաշրջան անցնելու պահից իր տվյալները Էփրիքոթ Կապիտալի կողմից մշակվեն սույն Քաղաքականությամբ սահմանված կարգով և նպատակներով:

4.1. Տվյալների պահպանման ժամկետները

4.1.1. Էփրիքոթ Կապիտալի կողմից տվյալների մշակման ժամկետները սահմանում են՝ հաշվի առնելով.

- տվյալների մշակման սահմանված նպատակները,
- տվյալների սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի պայմանները,
- Տվյալների սուբյեկտների՝ իրենց տվյալների մշակման համար տրված համաձայնության գործողության ժամկետները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետները:

4.1.2. Ընկերությունը դադարեցնում է տվյալների մշակումը հետևյալ դեպքերում.

- տվյալների մշակումը դադարեցնելու պայմանը տեղի ունենալու կամ մշակման համար սահմանված ժամկետը լրանալու դեպքում,
- տվյալների մշակման նպատակներին հասնելու կամ այդ նպատակներին հասնելու անհրաժեշտությունը կորցնելու դեպքում,
- անձնական տվյալների սուբյեկտի պահանջով՝ անձնական տվյալների պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,
- տվյալների ոչ իրավաչափ մշակում բացահայտելու դեպքում, եթե տվյալների մշակման իրավաչափությունն ապահովվելն անհնար է,
- Ընկերության լուծարման դեպքում:

5. Տվյալների փոխանցումը երրորդ անձանց

5.1. Էփրիքոթ Կապիտալը կարող է Հաճախորդներին վերաբերող տվյալները փոխանցել երրորդ անձանց՝ այն դեպքերում և այն ծավալով, երբ դա անհրաժեշտ է ընկերության կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտականությունները կատարելու կամ ընկերության և/կամ Փոխկապակցված կազմակերպության կողմից Հաճախորդին ծառայությունների մատուցման համար: Մասնավորապես՝ տվյալները կարող են փոխանցվել երրորդ անձանց հետևյալ դեպքերում՝

- **ՀՀ պետական մարմիններին.** մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Պետական եկամուտների կոմիտե, դատական և իրավապահ մարմիններ, ինչպես նաև այլ պետական մարմիններ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների կատարման նպատակով, այդ թվում՝ հարկային և ֆինանսական հաշվետվողականության ապահովման նպատակով, ներառյալ ՏՀԶԿ-ի կողմից սահմանված CRS-ի պահանջներով «Հարկային հարցերով փոխադարձ

վարչական աջակցության մասին» կոնվենցիայի և համապատասխան միջազգային պայմանագրերի համաձայն:

- **Ֆինանսական կազմակերպություններին՝** այդ թվում, բայց չսահմանափակելով՝ միջնորդ ֆինանսական կազմակերպություններին կամ հաճախորդի գործարքի մյուս կողմին սպասարկող ֆինանսական կազմակերպությանը՝ պայմանագրային պարտավորությունների կատարման և ծառայությունների մատուցման նպատակով, մասնավորապես՝ ֆինանսական գործարքների, վճարումների, փոխանցումների կատարման, հաշիվների սպասարկման, հաճախորդի պատվերի/հանձնարարականի կատարման նպատակով:
- **Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծառայություններ մատուցողներին՝** տվյալների պահպանման, մշակման, հոսթինգի, կամ տեխնիկական աջակցության նպատակով՝ վերջիններիս հետ կնքված պայմանագրերով սահմանված կարգով և ծավալով:
- **Իրավաբանական, աուդիտորական, հաշվապահական և խորհրդատվական ծառայություններ մատուցող ընկերություններին՝** իրավաբանական խորհրդատվություն, աուդիտ, հարկային խորհրդատվություն կամ ներկայացուցչություն ապահովելու նպատակով:
- **Արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպություններին՝** ֆինանսական հաշվետվությունների վերլուծության և հարկային ստուգումների շրջանակում:
- **Ապահովագրական ընկերություններին՝** աշխատողների կամ Էփրիքթթ Կապիտալի կողմից մատուցվող ծառայությունների մասով ապահովագրություն ձեռք բերելու նպատակով:
- **Փոխկապակցված կազմակերպություններին՝** Էփրիքթթ Կապիտալի կողմից հաճախորդին ծառայությունների մատուցման շրջանակում, համատեղ գործառնությունների իրականացման, իրավական պարտավորությունների կատարման կամ Փոխկապակցված կազմակերպության կողմից Հաճախորդի ցանկությանը վերջինիս ներդրումային կամ այլ ծառայություններ մատուցելու նպատակով:

5.2. Տվյալների սուբյեկտը սույն Քաղաքականությունը իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ համաձայնություն տալով և/կամ Էփրիքթթ Կապիտալի հետ կնքված պայմանագրի ուժով հստակ և անվերապահորեն համաձայնվում է, որ իր կամ իր կողմից ներկայացված անձի վերաբերյալ անձնական տվյալները կարող են առանց լրացուցիչ համաձայնության հավաքագրվել, մշակվել, պահպանվել և փոխանցվել երրորդ անձանց՝ սույն Քաղաքականության 5.1 կետում սահմանված դեպքերում և նպատակներով:

5.3. Տվյալների սուբյեկտը սույն Քաղաքականությունը իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ համաձայնություն տալով և/կամ Էփրիքթթ Կապիտալի հետ կնքված պայմանագրի ուժով հստակ և անվերապահորեն համաձայնվում է, որ իր անձնական տվյալները փոխանցվեն այլ պետություն՝ սույն Քաղաքականությամբ և գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե.

- Անձնական տվյալների փոխանցումը բխում է անձնական տվյալների մշակման նպատակներից և (կամ) անհրաժեշտ է այդ նպատակների իրագործման համար,
- տվյալների սուբյեկտը տվել է համապատասխան համաձայնություն,
- տվյալները փոխանցվում են այնպիսի պետություն, որտեղ ապահովված է անձնական տվյալների պաշտպանության բավարար մակարդակ՝ համաձայն միջազգային պայմանագրերի կամ Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի կողմից պաշտոնապես հաստատված երկրների ցանկի, կամ

- տվյալները փոխանցվում են Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ:

5.4. Սույն Քաղաքականության 5.1. կետում նշված դեպքերում տվյալները երրորդ անձանց փոխանցելիս Էփրիքոթ Կապիտալը ելնում է երրորդ անձանց կողմից տվյալների պատշաճ պաշտպանության կանխավարկածից:

5.5. Էփրիքոթ Կապիտալը հնարավորության սահմանում կատարում է պատշաճ ուսումնասիրություն և ձեռնարկում համապատասխան միջոցներ՝ հավաստիանալու համար, որ երրորդ անձինք ունակ են ապահովել իր կողմից փոխանցված տվյալների պաշտպանությունը:

5.6. Էփրիքոթ Կապիտալը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց՝ Տվյալների պաշտպանության առնչությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունավետության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ նախքան տվյալները փոխանցելը տեղյակ է եղել, որ տվյալ կազմակերպությունը կամ մարմինը չի ապահովում տվյալների պատշաճ պաշտպանությունը:

5.7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ հանրային իշխանության մարմինների (ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ պետական եկամուտների կոմիտե և այլն) պահանջի ուժով Ընկերությունը իրավասու է առանց Տվյալների սուբյեկտին նախազգուշացնելու կամ վերջինիս համաձայնությունը ստանալու փոխանցել վերջիններիս վերաբերող տվյալները: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում օրենսդրական դրույթների կամ հանրային իշխանության մարմինների պահանջների իրավաչափության համար:

6. Տվյալների անվտանգության ապահովում, ռիսկերի գնահատում և մշտադիտարկում

6.1. Տվյալների մշակելու անվտանգության ապահովման, ռիսկերի գնահատման և մշտադիտարկման համար Էփրիքոթ Կապիտալը պարտավոր է միջոցներ ձեռնարկել ընկերության գործունեության՝ սույն Քաղաքականությանը և տվյալների պաշտպանությանը վերաբերող ընկերության այլ ներքին իրավական ակտերին համապատասխանությունը ապահովելու նպատակով:

6.2. Տվյալներ մշակելիս Էփրիքոթ Կապիտալը պարտավոր է ապահովել մշակման համապատասխանությունը կիրառելի օրենսդրությանը: Ընկերությունը պարտավորվում է մշտադիտարկում կատարել ընկերության և դրա աշխատողների գործունեության նկատմամբ՝ ապահովելու համար տվյալների պաշտպանությունը անօրինական ոչնչացումից, պատահական կորստից, տարածումից, վերափոխումից, կրկնօրինակումից և անօրինական օգտագործման և այլ ձևերից:

6.3. Հավաքագրվող տվյալների պաշտպանությունն ապահովվում է ընկերության տեղեկատվության անվտանգության քաղաքականությանը համապատասխան: Տվյալների անվտանգության ապահովման միջոցառումները պետք է լինեն համարժեք տվյալները մշակելու հետ կապված ռիսկերին:

6.4. Տվյալների պաշտպանությունն ապահովելու համար Էփրիքոթ Կապիտալը ձեռնարկում է հետևյալ միջոցները.

6.4.1. Ընկերությունը ապահովում է պատշաճ տեխնիկական պատրաստվածություն, այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ հակավիրուսային պաշտպանություն, կոդավորում (Encryption) և այլն:

6.4.2. Ընկերությունը կարող է աշխատողների հետ կնքել գաղտնիության պայմանագրեր, կատարել տվյալների հոսքի կանոնավոր աուդիտներ, ռիսկերի վերլուծություն և այլն:

6.4.3. Ընկերությունը կազմակերպում է սույն քաղաքականության 7-րդ գլխում նախատեսված կազմակերպչական միջոցառումները, այդ թվում՝ թրեյնինգներ, ապահովելու համար տվյալների պաշտպանության վերաբերյալ աշխատողների իրազեկված լինելը:

6.5. Սույն քաղաքականությունը ենթակա է վերանայման առնվազն 2 տարվա հաճախականությամբ՝ հաշվի առնելով տվյալների պաշտպանության ոլորտի առանձնահատկությունները և Անձնական տվյալների բնագավառում պարբերաբար իրականացվող օրենսդրական փոփոխությունները:

6.6. Տվյալների ստացումը՝

6.6.1. Էփրիքոթ Կապիտալն տվյալները ստանում է ուղղակիորեն Տվյալների սուբյեկտից կամ համապատասխան լիազորություններով օժտված Տվյալների սուբյեկտի օրինական ներկայացուցիչներից կամ սույն Քաղաքականությամբ սահմանված դեպքերում՝ այլ անձանցից:

6.7. Տվյալների պահպանումը՝

6.7.1. Տվյալները պահվում են ֆիզիկական կրիչներում (թղթային, էլեկտրոնային կրիչներ), այդ թվում՝ կենտրոնացված տվյալների պահոցներում:

6.7.2. Տվյալների ամբողջականությունն ու գաղտնիությունն ապահովելու համար այս տեղեկատվության գրանցման, ձևավորման և պահպանման բոլոր գործողությունները պետք է կատարվեն միայն ընկերության այն աշխատողների կողմից, ովքեր կատարում են այդ աշխատանքը իրենց աշխատանքային պարտականություններին համապատասխան:

6.7.3. Տվյալների պահպանումը պետք է իրականացվի այնպես, որ բացառվի դրանց կորուստը կամ օգտագործման չարաշահումը:

6.7.4. Տվյալներ պարունակող փաստաթղթերի հետ աշխատելիս՝ արգելվում է աշխատանքային տարածքը լքելու դեպքում դրանք աշխատավայրում թողնելը կամ այդ փաստաթղթերով պահարանները բաց թողնելը:

6.7.5. Աշխատանքային օրվա ավարտին Տվյալներ պարունակող բոլոր փաստաթղթերը պետք է տեղափոխվեն պահարաններ:

6.7.6. Անձնական տվյալներ պարունակող փաստաթղթերի պահպանումը պետք է իրականացվի հետևյալ կերպ՝

1) Անձնական տվյալները թղթային տարբերակով պետք է պահվեն Էփրիքոթ Կապիտալի տարածքում՝ չհրկիզվող պահարաններում կամ մետաղական և կողպվող պահարաններում, որոնք պաշտպանում են չարտոնված մուտքից,

2) Անձնական տվյալների բոլոր էլեկտրոնային կրիչները պետք է հաշվառվեն: Անձնական տվյալներ պարունակող արտաքին շարժական էլեկտրոնային կրիչների հաշվառումն իրականացվում է այն ստորաբաժանումներում, որոնք մշակում են Անձնական տվյալները:

6.8. Տվյալների կրիչների հաշվառման կարգը՝

6.8.1. Էփրիքոթ Կապիտալը պետք է հաշվառի անձնական տվյալներ պարունակող բոլոր մեքենայական և թղթային կրիչները: Տվյալների մեքենայական կրիչների հաշվառումը կազմակերպելու համար յուրաքանչյուր կրիչին տրվում է հաշվառման համար: Դա անելու համար մեքենայական բոլոր կրիչները պետք է նշվեն կնիքով կամ գույքագրման համարով կաշուն պիտակով: Սկավառակների վրա, որոնց վրա պիտակ կպցնելն անընդունելի է տեխնիկական պատճառներով, պիտակի մանրամասները ամբողջությամբ դրվում են սկավառակի վրա հատուկ չոնջվող մարկերով:

6.8.2. Անհրաժեշտ է իրականացնել բոլոր մեքենայական կրիչների տարեկան գույքագրում, որոնց վրա պահվում են տվյալները: Գույքագրման արդյունքները պետք է փաստաթղթավորվեն:

6.9. Տվյալներին հասանելիության տրամադրման պատասխանատուն հանդիսանում է Տեղեկատվական անվտանգության պատասխանատուն, իսկ տվյալների մշակման կամ խմբագրման համար պատասխանատու է այն աշխատակիցը ով իրականացրել է նշված փոփոխությունը:

6.10. Պատասխանատու անձը պարտավոր է՝

- 1) իրականացնել ներքին հսկողություն Ընկերության և նրա աշխատողների կողմից տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրության, ներառյալ տվյալների պաշտպանության պահանջների պահպանման նկատմամբ,
- 2) տեղեկացնել ընկերության աշխատողներին տվյալների պաշտպանության մասին ՀՀ օրենսդրության դրույթների, տվյալների մշակման վերաբերյալ ներքին իրավական ակտերի, տվյալների պաշտպանության պահանջների մասին,
- 3) կազմակերպել Տվյալների սուբյեկտի կամ նրանց ներկայացուցիչների հարցումների ընդունումն ու մշակումը և վերահսկել այդպիսի հարցումների ընդունումն ու մշակումը:

6.11. Էփրիքոթ Կապիտալի աշխատողների հասանելիությունը ընկերությունում մշակվող Տվյալների սուբյեկտին վերաբերող տվյալներին՝

6.11.1. Էփրիքոթ Կապիտալի աշխատողները Տվյալների սուբյեկտի վերաբերող տվյալներին հասանելիություն ստանում են միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իրենց աշխատանքային պարտականությունները կատարելու համար:

6.11.2. Էփրիքոթ Կապիտալի այն աշխատողների ցանկը, ովքեր հասանելիություն ունեն Անձնական տվյալներին, որոշվում է Ընկերության հաստատված ցանկով:

6.11.3. Աշխատողին, ում անհրաժեշտ է Տվյալների սուբյեկտի վերաբերյալ տվյալներին մեկանգամյա կամ ժամանակավոր հասանելիություն, կարող է այդպիսի հասանելիություն տրամադրվել աշխատողի անմիջական ղեկավարի գրավոր հիմնավորված հարցման հիման վրա:

6.11.4. Էփրիքոթ Կապիտալի աշխատողը Տվյալների սուբյեկտին վերաբերող տվյալներին հասանելիություն է ստանում սույն Քաղաքականությունը և տվյալների պաշտպանության վերաբերյալ այլ ներքին փաստաթղթերի պահանջներին ծանոթանալուց հետո:

6.12. Տվյալների ոչնչացում

6.12.1. Տվյալները ենթակա են ոչնչացման մշակման նպատակներին հասնելու կամ դրանց հասնելու անհրաժեշտության բացկայության դեպքում՝ եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում Ընկերությունը պարտավոր չէ այն արխիվացնել:

6.12.2. Տվյալների ոչնչացումը, որոնք ենթակա չեն արխիվային պահպանման, իրականացվում է միայն հանձնաժողովի կողմից, որը բաղկացած է տվյալների պաշտպանության համար պատասխանատու աշխատողից և համապատասխան տվյալների համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման ներկայացուցչից: Ոչնչացման արդյունքների հիման վրա պետք է կազմվի ակտ:

7. Տվյալների սուբյեկտի իրավունքները և բողոքարկման կարգը

7.1. Տվյալների սուբյեկտը, ի թիվս այլնի, իրավունք ունի.

7.1.1. ստանալու տեղեկություններ իր տվյալների, տվյալները մշակելու, մշակելու հիմքերի և նպատակների, տվյալները մշակողի, նրա գտնվելու վայրի մասին, ինչպես նաև այն անձանց շրջանակի մասին, որոնց կարող են փոխանցվել իրեն վերաբերող տվյալները:

7.1.2. հետ կանչելու իր համաձայնությունը կիրառելի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

7.1.3. ծանոթանալու իր տվյալներին, մշակողից պահանջելու ուղղել, ուղեփակել կամ ոչնչացնել իր տվյալները, եթե տվյալներն ամբողջական կամ ճշգրիտ չեն կամ հնացած են կամ ձեռք են բերվել անօրինական ճանապարհով կամ անհրաժեշտ չեն մշակելու նպատակներին հասնելու համար: Տվյալների ոչնչացումը կարող է չիրականացվել, եթե դա հակասում է կիրառելի օրենսդրության դրույթներին:

7.1.4. Անձնական տվյալները Էփրիքոթ Կապիտալի կողմից ուղղված, ուղեփակված կամ ոչնչացված լինելու վերաբերյալ կասկածների դեպքում Տվյալների սուբյեկտն իրավունք ունի դիմելու Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին՝ իր Անձնական տվյալներն ուղղված, ուղեփակված կամ ոչնչացված լինելու փաստը պարզելու և իրեն տեղեկություններ տրամադրելու մասին պահանջով:

7.1.5. Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում իր իրավունքների խախտման առթիվ դիմել Անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմին կամ դատարան:

7.2. Սույն քաղաքականության 7.1 կետով սահմանված իրավունքները իրացնելու նպատակով Տվյալների սուբյեկտը իրավասու է դիմել ընկերությանը հետևյալ կապի միջոցներով.

- Էլ. հասցե՝ info@apricotcapital.am
- Հեռախոսահամարներ՝ +37460707111, +37498222881

կամ այցելել Էփրիքոթ Կապիտալի գրասենյակ (հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 10 շենք, «Պիացցա Գրանդե» բիզնես կենտրոն, 2-րդ հարկ, 110 տարածք):

8. Պատասխանատվությունը

Եթե Էփրիքոթ Կապիտալի աշխատողների կողմից թույլ են տրվել Քաղաքականությամբ սահմանված պահանջների խախտումներ, ապա Գործադիր տնօրենի որոշմամբ նրանց նկատմամբ կարող է կիրառվել ՀՀ օրենսդրությամբ և/կամ Էփրիքոթ Կապիտալի ներքին իրավական ակտերով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

9. Այլ դրույթներ

Քաղաքականության բոլոր այլ կետերը, որտեղ հղում է տրված կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցմանը կամ Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններին, միայն այդ մասով ուժի մեջ են մտնում «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից Էփրիքոթ Կապիտալին կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցման թույլտվություն տալու պահից: